ՄԱՐՏ, ԱՊՐԻԼԸ ԵՆԿ-Ի ՀԵՏ

Սիրելի՛ ընթերցողներ, սիրով ներկայացնում ենք Ձեզ ԵՆԿ հերթական ամսաթերթը, որում կպատմենք կազմակերպության մարտից ապրիլ ամիսների անցուդարձի մասին:

ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ

Գյումրու «Ընտանիքի անկյուն» ռեսուրսային կենտրոնում հաջողությամբ իրականացվեց «ԵՄ-ն հանուն կանանց և տղամարդկանց իրավահավասարության» ծրագրի շրջանակներում Շիրակում իրականացվող «Հոգատարություն հանուն հավասարության» խորագրով երկամսյա ծնողավարության դպրոցի վերջին դասընթաց-հանդիպումը:

Դասընթացների նպատակն է նպաստել աղջիկների ու տղաների, կանանց և տղամարդկանց իրավահավասարության խթանմանը, երեխայի խնամքի ու ծնողավարության մեջ տղամարդկանց ներգրավվածության մեծացմանը, կանանց ու տղամարդկանց դերերի վերաբերյալ կարծրատիպերի փոփոխմանը:

ԻՄԱՆԱԼ ԱՎԵԼԻՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՀԵՏ

Տավուշի մարզում «Ընտանիքի անկյուն» մարզային ռեսուրսային կենտրոն ստեղծելու նպատակով ապրիլի 1-ին Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի նախագահ Արթուր Նաջարյանը և «ԵՄ-ն հանուն կանանց և տղամարդկանց իրավահավասարության» ծրագրի համակարգող Աստղիկ Հովհաննիսյանը հանդիպում ունեցան Տավուշի մարզպետի տեղակալ Թաթուլ Ստեփանյանի հետ:

ԻՄԱՆԱԼ ԱՎԵԼԻՆ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԱԿՈՒՄԲ 2021

Մարտի 9-ին մեկնարկեցին անգլերենի միջին և սկսնակ մակարդակների նոր ակումբները:
Առաջին հանդիպման ընթացքում մասնակցիները հնարավորություն ունեցան ծանոթացման խաղերի միջոցով ճանաչել միմյանց և ակումբավարներին, ինչպես նաև ներկայացվեց ակումբների վարման կարգը և ձևաչափը

ԻՄԱՆԱԼ ԱՎԵԼԻՆ

CITIES OF YOUTH

Տեղի ունեցավ «Երիտասարդների քաղաք» ծրագրի 11-րդ հանդիպումը, որի նպատակն էր բացահայտել զբոսաշրջության ոլորտում տարածաշրջանում առկա կամավորական հնարավորությունները, զբոսաշրջային կազմակերպությունների, անհատների տրամադրվածությունը կամավորական աշխատանքի նկատմամբ և երիտասարդների մոտիվացիան՝ կամավորական գործունեություն ծավալելու նշված ոլորտում:

ԻՄԱՆԱԼ ԱՎԵԼԻՆ

Ծրագրի հերթական հանդիպումը վերաբերում էր կամավորությանը և բիզնես սեկտորի հետ համագործակցությանը: Մասնակիցները հյուրընկալվեցին տեղի ռեստորաններից «Ֆլորենս Գյումրի»-ում և իրենց հարցերը հղեցին ռեստորանի տնօրեն Կարեն Հարությունյանին:

ԻՄԱՆԱԼ ԱՎԵԼԻՆ

ԳՅՈՒՄՐՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՏՈՒՆ

«Գյումրու երիտասարդների տան» թիմի կողմից շարունակվում են իրականացվել տեղեկատվական հանդիպումները Գյումրու մի շարք դպրոցներում և ուսումնական հաստատություններում, որոնց ընթացքում ներկայացվում են կենտրոնի գործունեության, տրամադրվող ծառայությունների և ընձեռվող հնարավորությունների մասին:

ԿՅԱՆՔԻ ՀԻՄՆԱՐԱՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Կյանքի հիմնարար հմտություններ դեռահասների համար» ծրագրի մեկնարկային փուլում «Գյումրու երիտասարդների տուն» և «Սպիտակի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոններում տեղի ունեցավ «Սթրեսի կառավարում, հուզական կարգավորում» թեմայով դասընթաց, որն անցկացրեց Արեգ Թադևոսյանը: Դասընթացի ընթացքում մասնակիցները ուսումնասիրեցին հիմնարար հմտությունների քարտեզը, անձնային աճի մոտիվացիան, սթրեսի տեսակները, սթրես առաջացնող և նվազեցնող գործոնները, սթրեսի ընդհատման, հույզերի ճանաչման և կարգավորման եղանակները:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մարտի 12-ին կարևոր հանդիպում տեղի ունեցավ Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի ներկայացուցիչների, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի և Երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության պետի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին երիտասարդական կենտրոնների, երիտասարդական աշխատանքի ինստիտուտի կայացման, երիտասարդական աշխատողի մասնագիտական ճանաչման, ոլորտի շարունակական զարգացմանն ուղղված հարցերը և համագործակցության հնարավոր ուղիները:

ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«Մեդիագրագիտության» թեմատիկ շաբաթվա շրջանակներում կենտրոնի սաների համար իրականացավ «Մեդիագրագիտություն և լրատվություն» թեմայով դասընթաց, որը վարեց հեռուստառադիո հաղորդավար, խմբագիր Էդգար Բաղդասարյանը:

ՀԵԾԱՆՎԱՐՇԱՎ ԲԱՅՔԼԱՅՖ-Ի ՀԵՏ

Ապրիլը ամիսը սկսվեց գարնանային տրամադրությամբ: «Գյումրու երիտասարդների տունը» Բայքլայֆ ՍՁ-ի հետ համատեղ իրականացրեց հեծանվային միջոցառում ապրիլի 7-ին՝ մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ: Միջոցառման ընթացքում կենտրոնի հեծանվորդ սան աղջիկները ունեցան հեծանվաերթ Գյումրիում՝ իրենց իսկ ձեռքով պատրաստված բնական հումքից օճառները նվիրելով ճանապարհին հանդիպած գեղեցիկ սեռի ներկայացուցիչներին:

ՀԵՏԵՎԵԼ ԷՋԻՆ